## Դեկտեմբերի 7

* * *

Мой нераскрывшийся цветок–
В оковах дремлющая нежность,
Погибельный последний стон
И смерти черной неизбежность.
Увянешь ты, как на кресте
Христос увял. Спокойно, мирно.
Ты в мир пришедшая невинность
В своей прекрасной чистоте...

Мой нераскрывшийся цветок,
Взлети, тебе дарю я крылья,
Взлети над миром, как мираж,
Еще не время умирать...
Но, знаю я, рукой жестокой
Сорвут тебя, сомнут и бросят,
Мой нераскрывшийся цветок –
В оковах дремлющая нежность...

* * *

Застыли часы на отметке
Одиннадцать сорок,
И стрелки повисли как метки,
Оставив следы...
Часы на башне –
Как черный декабрьский ворон,
И плач погребальный
Тысячекратной беды...
И слезы вдовы,
И кровь на распластанном камне,
Крик страшной совы
Над школой, погибшей навек.
Застыли часы на отметке
Одиннадцать сорок
Как память о павших
В жестокий декабрьский день...



### Ночь на 8 декабря 1988 года

Ночь холодна,
и на твоем лице
Улыбка вечностью
уже струится,
От робости она
уж не таится –
Последней ночи
горестный предел...
А я один – усталый,
пьяный, жалкий –
Над изголовием твоим,
немой,
А ты так мирно спишь,
как будто в сказке
Царевна, спящая зимой...
Бессмертная улыбка
– тот же вид,
Но холодны
твой лобик, губы, ноги,
И ты готовишься
уже к дороге
И не придешь
назад уже, увы...
И лишь рассвет
развеял холод ночи,
Исчезла вдруг
улыбка твоя вслед;
И понял я:
ты улыбалась,
дочь,
Лишь для меня,
лишь для меня
в ту
Ночь.

### День переписи населенья

День переписи населенья...
Тебя уж нет – что мне сказать?
Нет воскрешения из мертвых –
И плачет тихо твоя мать...
И женщина, что так любила
Тебя, пришла нас записать –
Она не знала, что погибла
И ты в тот страшный адов час...
Она спросила: «А Анушик?»)
Окаменела мать, а мне
В тот миг подумалось: жива ты,
Лишь я не знаю о тебе...
И я смотрел на двери дома –
Сейчас раскроются они,
И ты войдешь с улыбкой мая,
Обнимешь мать еще в слезах,
И все начнется вдруг сначала,
И подчинится жизнь мечте...

* * *

Я склонюсь над буквами твоими,
Что вкривь и вкось легли в твою
тетрадь,
Храню тот тазик,
где белье для куклы
У мамы научилась ты стирать.
Твои рисунки, платья, письма
Оставили в душе жестокий след,
И есть одна, единственная, истина –
Ты с нами, с нами,
но тебя уж нет...
И знаю, знаю –
нет тебе замены,
Осталась ты
таинственной мечтой, –
И замер я перед землей священной,
И замер я перед своей бедой...
А кто излечит?
Говорят, что время.
Но почему труднее с каждым днем?..
(Они не знают: сердце не приемлет
Их логики, холодной и простой).

На холмике твоем цветы увяли,
Как ты, когда уже спасли тебя.
Тебя уж нет, цветок, увы, сорвали,
И Сатана смеется мне вослед...

**Ара ГЕВОРКЯН**

# Ուստա Թաթոսի ճակատագիրը



1989 թվականն էր: Ավերված բնակավայրերում և գերեզմանոցներում լաց ու կոծ էր: Շիրակ գերեզմանոցում ասեղ գցելու տեղ չկար: Գիշերով բարեկամիս թաղելուց հետո հետ էինք վերադառնում, երբ նկատեցի նախկին ընկերոջս: Նա բաժակը ձեռքին, ցնորվածի պես պտտվում էր լայն շիրմաթմբի շուրջը, որի վրա մրգեր, քաղցրավենիք կային: Անուններ էր տալիս, ողբում ու երգում: Ողջ ընտանիքը (ութ անձ) կորցրել էր, մեն-մենակ էր մնացել, ցնորվել: Ցավակցություն հայտնեցի, հետո ասացի. «Ուստա Թաթոս, ամուր կեցի, քեզ մի կորցրու, դիմացի, համբերե: Շուրջդ նայիր, մենակ դու չես: Ապրի, որ նպատակ կատարես»: Զայրացած ինձ նայեց. «Ո՞ւմ համար ապրեմ, ի՞նչ նպատակ: Իմ աշխարհը կործանվել է, չկա: Բոլորը գնացին, ես էլ պիտի էրթամ»: «Ուստա Թաթոս, մեծ նպատակ կա: Էս հատորներիդ, որ կորցրել ես, ո՞ւմ հույսին կթողնես: Քո պարտքն է հուշաքար դնես, վրեն անունները գրես, որ անցնող-դարձող կարդան, ողորմի տան»: Զգաստացավ, գլուխը կախեց ու ոչինչ չասաց: Ես շարունակեցի. «Պարապ մի մնա, վաղը արի շինարարական տեխնիկում: Մոսկվայից շինարարներ են եկել՝ քաղաքը կառուցելու, ես նրանց մոտ նկարիչ եմ աշխատում, քեզ համար էլ մի գործ կգտնեմ: Կաշխատես, Աստված մի դուռ կբանա»:

Հաջորդ օրը եկավ, տրամադրությունը մի քիչ լավ էր, ասաց. «Ըսածդ եղավ, Աստված դուռ է բացել»: Ու սկսեց պատմել. «Գերեզմանոցից տուն էրթալուց երկու անգամ փորձեցի ավտոյի տակ ընկնել: Չեղավ, շոֆերներն իջան, մի լավ ծեծեցին, թե ավե՞րը քիչ տներներս քանդեց, հիմի էլ դու կուզես քանդել: Քիթ-մռութս արյունոտ հասա նոր ստացած դոմիկս: Տեսնեմ մի կին, երեխուն վերարկուի տակ առած, կծկվել է դռան առաջ: Զարմացած հարցրի՝ դու ո՞վ ես: Չեն չհանեց, լաց եղավ: Սիրտս մղկտաց, ինձ թվաց, թե կինս ու երեխաներս են եկել: Արագ դուռը բացեցի, ներս տարա, վառարանն ու լամպը վառեցի, ուտելիք դրի սեղանին, ասացի. «Քույր ջան, սա հարազատ ախպորդ տունը հաշվե, դու էլ ինձ պես տուժած ես, հաց կերեք ու էդ մահճակալին հանգստացեք, ես հատակին կքնեմ: Վաղը երկու հատ մահճակալ կբերեմ, յոլա կերթանք, մինչև Աստված լավ օրեր կամենա մեզ»: Չեն չհանեց, երեխուն կրծքին սեղմեց, լաց եղավ: Մի քիչ կերան, տաքացան ու քնեցին: Առավոտ հարցրի. «Քուրիկ, անունդ ի՞նչ է»: Ասաց. «Իմ անունը Հասմիկ է, տղունս՝ Նարեկ»: Հասմիկ ու Նարեկ որ լսեցի, սիրտս հույսով լցվեց: Ցույց տվեցի ուտելիքի տեղը. «Հասմիկ ջան, ախպորդ տունն է, ասել է թե քունկդ է: Ճաշ եփե, կերեք, մինչև գամ»: Ու քու քովդ եմ եկել: Դե գործ տուր, որ նպատակիս համար աշխատեմ»:

Տարա Ռոման Ալեքսանդրովիչի մոտ, ասացի, որ տուժած հարազատս է, աշխատանք է պետք: Ռոման Ալեքսանդրովիչը նրան աշխատանք տվեց նորակառույց թաղամասը կառուցող բրիգադներից մեկում: Բաժանվելիս խորհուրդ տվեցի միշտ կապ պահպանել ինձ հետ: Հետո էլ ասացի, որ հարազատի պես վարվի հյուրերի հետ, մինչև Աստված մի դուռ էլ բանա: Հուսալից գնաց ու երկու ամիս չերևաց: Մտահոգված էի, տնակի տեղը չգիտեի, որ ես գնայի: Եկավ երեք ամիս հետո: Վախվորած հարցրեցի. «Այ Թաթոս, ո՞ւր ես կորել, հո բան չի պատահել»: Ասաց. «Հա, պատահել է, հմը լավ բան»: Ու սկսեց պատմել. «Ես խորհուրդդ կատարել եմ, ախպորից էն կողմ չանցա, Հասմիկն էլ քրոջից: Մենակ թե Նարեկը ինձ անընդհատ պապա է ասում, ու երկուսս էլ անհարմար դրության մեջ ենք ընկել: Քեզնից էլ շնորհակալ եմ, լավ աշխատավարձ եմ ստանում ու երեխայի ուզածները առնում: Տարա, դպրոց ընդունել տվեցի, շոր-մոր առա, ամեն կիրակի այցի կերթամ մերոնց, բայց չեմ խմում: Կխոսեմ հետները՝ իմ անգիններ, չնեղենաք, ձեր հոգու համար կխնամեմ էդ որբերին: Կնոջս էլ ասում եմ՝ Նազի ջան, ուրիշ բան չկարծես, Հասմիկին քրոջ տեղ եմ դրել, երբ ամուսնանալ ուզեց, կամուսնացնեմ, կգնա: Նազին թե՝ Թաթոս, ես չեմ նեղենա, բախտը երկուսիդ հանդիպեցրել է, նրան առ, երեխուն մեծացրու, համ խեր է, համ էլ կյանք: Հիմի մոլորվել, մնացել եմ, ի՞նչ անեմ: Ես էլի էդ ախպերն եմ, իսկ Հասմիկը շատ է փոխվել, վրես, գլուխս լավ կաշե, Նարեկն էլ ծնողական ժողովի կտանի, դպրոց: Խորհուրդ տուր, ի՞նչ անեմ»:

Ես ասացի. «Լսիր, դու երբևէ հարցրել ես , թե ինչ կորուստներ ունի, կամ գիտե՞ տեղերը»: «Չէ, չեմ հարցրել,մենակ կտեսնիմ, որ շարունակ լաց է լինում»: Ասացի. «Դե ուրմն հարցրու, իմացիր զոհերի տեղը, տար թող լաց լինի վրեքը, հետո տիրություն արա, որ ավելի կապվի հետդ»: Թաթոսը խոսք տվեց, գնաց: Երկու ամիս հետո կոնյակով եկավ, բացեց, լցրեց բաժակները. «Բոլոր ասածներդ արել եմ: Շնորհակալություն քեզ, որ ինձ հետ պահեցիր մեռնելուց ու կանգնեցրիր նպատակ կատարելու ճամփին: Հիմի մի խնդրանք ունեմ, էս կիրակի գաս, հայրությունս շնորհավորես»: Ես անչափ ուրախացա, գրկախառնվեցինք, խոսք տվեցի անպայման գալ: Կիրակի նրանց

### ՇԻՐԱԿ ՀԱՆԴԻ ԾԱՂԿԱՍՏԱՆ

Բախտը քեզնից իր երեսը դարձրել,
Վարդաժպիտ քո դեմքն է կարծրել,
Բայց դու էլի զավակներիդ գիրկդ առած,
Մաքառում ես ավերի մեջ ջահ դառած:

Շիրակ հանդի ծաղկաստան,
Նորից-նորից դալարի,
Արհեստ-արվեստի Ոստան,
Խնդության Գետ իմ Գյումրի...

Դու վշտահար, խինդ է գրկիդ նոր Անին,
Երբ պիտի քո վերքը բուժե սպեղանին,
Նորից ցնծաս հրաշքներովդ սուրբ-խորան,
Նորից դառնաս վաղնջական թանգարան:

Շիրակ հանդի ծաղկաստան,
Նորից-նորից դալարի,
Արհեստ-արվեստի Ոստան,
Խնդության Մայր իմ Գյումրի...

Որբերն արդեն մեծացել ու շնչվորում են բույները,
Կյանքի ուղի են հարթել նոր շեների գույները,
Թո՛ղ ապահով կյանք վարեն, սպիացնեն աղետը,
Թո՛ղ աշխարհին զարմացնեն դարեր բարդող սյուները:

Շիրակ հանդի ծաղկաստան,
Նորից-նորից դալարի,
Արհեստ-արվեստի Ոստան,
Խնդության Հայր իմ Գյումրի...

տնակում էի: Հասմիկը տանտիրոջ նման ամեն ինչ տեղը տեղին պատրաստել էր: Սրտանց շնորհավորելով նրանց միությունը՝ ասացի. «Կյանքը շատ կարճ է, դրա համար էլ իր դառնություններով հանդերձ քաղցր է: Իսկական մարդը պետք է ապրի նպատակամղված, կատարի մարդու ու կոչման սրբազան պատվիրանները»: Պատմեցին, որ գտել են Հասմիկի հարազատների գերեզմանները և տիրություն են անում: Հրաժեշտ տվեցի գոհ սրտով, որ երկու հուսալքված մարդիկ սթափվել ու իրենց կյանքն են շարունակում միմյանց



օգնելով: Խիղճս հանգիստ էր, իմ միջամտությունը հաջողվել էր:

Շուտով 1991 – ին մեր քաղաքին օգնություն եկած շինարարները հետ գնացին: Ես մնացի անգործ, Անի թաղամասը կիսատ-պռատ կառուցվեց, Գյումրին մնաց ավեր: Այլևս չհանդիպեցի Թաթոսին: Հանդիպեցի 10 տարի անց:

2001 – ի տարեմուտին: Զահելացած Թաթոսը երկու որդիների հետ տոնածառ էր տուն տանում: Ուրախությանս չափ չկար: Հարազատների պես գրկախառնվեցինք: Ինքը սկսեց խոսել. «Գիտեմ, որ անհանգիստ էիր, ներիր, որ չկարողացա գնալուս մասին քեզ հայտնել: Հանկարծակի եղավ՝ մոսկվացիների հետ գնացի Ռուսաստան, տասը տարի լավ աշխատեցի, լավ ապրեցի, վերադարձել եմ, որ մյուս նպատակներս իրագործեմ»: Հետո պատմեց, որ արդեն բազմանդամ ընտանիք ունի, բոլոր զավակները կրում են զոհված երեխաների անունները: Հասմիկը հանձնարարել է գտնել ինձ ու տանել իրենց տուն: Հետո ծանոթացրեց որդիների հետ. «Հիշո՞ւմ ես, սա Նարեկն է, իսկ սա Վահանն է, մյուսները տանն են»: Նարեկը հիշեց ինձ ու տղամարդավարի ձեռքս սեղմեց: Վահանը ևս մոտեցավ: Հետո Թաթոսը բացատրեց, թե ինչու են ինձ իրենց տանը սպասում. «Ես ու Հասմիկը որոշել ենք քո քավորությամբ հունվարի 6-ին երեխաներին մկրտել: Համաձա՞յն ես մեր ընդհատված բարեկամությունը սրբացնել»: «Իհարկե, համաձայն եմ, Թաթոս ջան, անպայման կգամ»: Հացես վերցրեց, գնաց: Հետևից նայեցի, հիշեցի սև օրերը, դագաղներով լեցուն քաղաքը, մարդկանց վիշտն ու ողբը: Իսկ այսօր մարդկանց դեմքերը երջանիկ են, ու նրանք ուրախությամբ դիմավորում են Ամանորը:

**Հրանտ Սարգսյան**